

Հունիսի 22-ին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում բացվեց Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոցի աշակերտ, 15-ամյա էդվարդ Բադոյանի անհատական ֆոտո-ցուցահանդեսը: Այն նախաձեռնել էր Վրաստանի հայ նկարիչների միությունը:

«Իմ Թիֆլիսը» խորագրով շուրջ երեք տասնյակ աշխատանքները պատանու սիրելի քաղաքի անկրկնելի գեղեցկության արտահայտություն են:

Բացելով ցուցահանդեսը, Վիրահայոց Թեմի մամլո խոսնակ Սուսաննա Խաչատրյանը, արժևորելով Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում իրականացված բազմաթիվ տարբեր բնույթի և նշանակության միջոցառումները, թերևս առանձնահատուկ անվանեց ընդամենը 15-ամյա պարմանի անհատական ցուցահանդեսը: Սբ. էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանն իր օրհնությունը բաշխելով պատանի լուսանկարչին, խոսեց այն հիացմունքի և հետաքրքրության մասին, որն ինքը զգացել է նրանց տանը առաջին անգամ տեսնելով այս լուսանկարները:

Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը բարձր գնահատելով էդվարդ Բադոյանի ստեղծագործական շնորհը, դրանք անվանեց դրամատիզմով և ողբերգականությամբ հագեցած լուսանկարներ:

Պատանի լուսանկարչի աշխատասիրությունը, պահը ճիշտ նկատելու և որսալու հմտությունը, հետաքրքիր համադրությամբ բարդ կոմպոզիցիաներ ստեղծելու ունակությունը բարձր գնահատեցին բանախոսներ՝ Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, ռեժիսոր-նկարիչ Միքայել Գրիգորյանը, Վրաստանի մտավորականների միության Թբիլիսիի կազմակերպության նախագահ Ենոք Թադևոսյանը, Սրբապատկերագործ-ասեղնագործող Միխեիլ Մճեդլիշվիլին, լուսանկարչի դաստղեկ Մարին ա Արությունովան և ուրիշներ:

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունը բաշխելով 15-ամյա էդվարդ Բադոյանին և բոլոր ներկաներին, մաղթեց պատանուն աշխատասիրությամբ շարունակել զարգացնել իր ունակությունները և մոտ լինել ազգին ու եկեղեցուն:

Վրաստանի հայ նկարիչների միությանը և ծնողներին ուղղված շնորհակալության խոսքում էդվարդ Բադոյանը երախտագիտությամբ նշեց, որ իր երազանքն էր ցուցահանդեսը կազմակերպել Վիրահայոց Թեմում՝ Հավլաբարի Սբ. էջմիածին եկեղեցուն կից:

էդվարդ Բադոյանի լուսանկարների անհատական ցուցահանդեսը կշարունակվի մինչև հուլիսի մեկը: